

**ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՀԱՐՅԸ
ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Խաչատրյան Վալենտին

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

valentin.khachatryan81@gmail.com

DOI: 10.54503/978-9939-970-08-0-84

Բանալի բառեր. գրաբար, բարբառ, գրական լեզու, խոսակցական լեզու, հայերենագիտություն, բարբառագիտություն, լեզվաբանություն:

Նախաբան: Հայ բարբառագիտության սկզբնավորման շրջանից (18-րդ դարի առաջին տասնամյակներից) ի վեր շուրջ մեկուկես դար գերիշխել, ապա և մինչև 20-րդ դարի 50-ականների վերջերը գոյություն է ունեցել մի տեսակետ, որի համաձայն՝ V դարում հայերեն բարբառներ չեն եղել, իսկ հետագայի բարբառները առաջացել են գրաբարի տրոհման, աղավաղման հետևանքով: Ընդհանուր լեզվաբանության և մասնավորապես հայերենագիտության զարգացմանը զուգընթաց այդ տեսակետը հերքվել է, և այսօր էլ իշխում է այն կարծիքը, որ մշտապես, V դարում նույնպես, եղել են հայերեն բարբառներ՝ անկախ նրանից, թե որքան առավել կամ նվազ խորությամբ են եղել նրանց տարբերությունները: Իսկ թե ինչ բարբառներ են եղել, ինչպիսի բնույթ են կրել, էական ինչ հատկանիշներ են ունեցել և զանազան այլ հարցեր շարունակում են հայ լեզվաբանությանը զբաղեցնել մինչ օրս: Ահա թե խնդրո առարկայի վերաբերյալ ինչ արդյունքներ են գրանցվել:

V դարում հայերեն բարբառների գոյության հարցի քննության առաջին փուլը: XIX դարի 30-40-ական թթ. Վիեննայի Մխիթարյան միաբանության մի քանի անդամներ (Գարազաշյան, Գաթըրճյան և այլք), խորապես ծանոթանալով V դարի մատենագրության լեզվին,

առաջին անգամ նկատում են, որ այն միատարր չէ: Տարբերություն կա մինչև 60-ական թթ. գրված և երկրորդ կեսի գործերում, նաև՝ նշված շրջանների առանձին երկերի լեզվում: Անտոն Գարագաշյանը «Նկարագիր ուսմանց» աշխատության մեջ¹ և Հովսեփ Գաթըրճյանը «Մաշտոցեան լեզու» հոդվածում² հակադրում են մաքուր, ընտիր գրաբար հայերենը և օտարաբանություններով հայերենը: Առաջինը ստանում է ոսկեդարյան կամ դասական հայերեն անվանումը:

Հետագայում նույն Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Ա. Այտընյանը իր «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» աշխատության նախաբանում՝ «Նախաշաւիղում», քննում է V դարում գրաբարին զուգահեռ նաև գավառական (բարբառային) և ռամկորեն (ժողովրդախոսակցական) հայերենի գոյության հարցը: Նախ հետևյալ կարևոր միտքն է արտահայտում. «Հայաստանի պէս ընդարձակ երկրի մը բազմաթիւ գաւառներուն մէջ հին ժամանակները քանի մը այլակերպ բարբառներ գործածուիլն այնչափ բնական էր, որ եթէ գրաւոր վկայութիւններն ալ լռէին՝ լոկ մակաբերութիւնը դէռ կարժէր»³: Այնուհետև անդրադառնում է իր հիշատակած վկայություններին, որոնց մեջ առաջիններից է Կորյունինը, որի համաձայն՝ Մաշտոցը թագավորից հրաման է ստանում դպրության գործը սկսել Մարաց կողմերից, «որք ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւղութեան, այլ եւ վասն խեցբեկագոյն եւ խոշորագոյն լեզուին դժուարամատոյցք էին», ապա ավելացնում է. «Գրեթէ նոյնչափ ապահովութեամբ կրնանք անմշակ կէս վայրենի բարբառ մը տալ Սիւնեաց

¹ Գարագաշեան Ա., *Նկարագիր ուսմանց*, Վիեննա, 1845:

² Գաթըրճեան Հ., *Մաշտոցեան լեզու*, Հանդէս Ամսօրեա, 1913:

³ Այտընյան Ա., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի*, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1987, էջ 42-43:

գաւառին, որ պատմութեան մէջ «Գազանամիտ, վայրենագոյն, ճիւղաբարոյ կողմանք» ըսուած է՝ դարձյալ նկատի առնելով Կորյունի խոսքը: Եվ ենթադրաբար նույն շարքին է դասուի նաև Պարսկահայաստանի, Փայտակարանի ու Գուգարքի կողմերը⁴: Անդրադառնալով նաև Խորենացու և Հովհաննէս Երզնկացու նույնատիպ վկայություններին՝ այնուամենայնիվ գրում է, որ մեր հին բարբառների մասին որոշակի պատկերացում չենք կարող կազմել, քանի որ գիր ու գրականություն ավանդողները, նույնիսկ հետագա դարերում, Մեսրոպյան դպրոցի հետևողությամբ են գրել և իրենց կենդանի բարբառից որևէ նմուշ չեն փոխանցել. «Որչափ որ հին գաւառականներու զանազանութեան գոյութիւնը ցուցուած համարինք, այսու ամենայնիւ մեր հին լեզուին այս կարելոր մասը միշտ երեւելի խրամ մը կը մնայ՝ զորն որ լեզուին պատմութիւնը մեզի թողուցած է. եւ մանաւանդ անով գաւառական հայերէններու կերպն ու կերպարանքը ամենեւին անծանօթ մնացած է մեզի՝ որ մեր առաջին գրիչներուն ծնընդեան եւ սնընդեան գաւառացը լեզուական պէսպիսութիւններն ալ միեւնոյն դպրոցի հալոցին մէջ եկած ի մի ձուլուած են եւ միակերպ եղած՝ զոնէ ըստ քերականական մասին. մանաւանդ որ հայերէն գրութեան կերպը կամ հայկաբանութեան արուեստն իրենց յատուկ կերպով աւանդուած գիտենք: Եթէ յառաջները Մեսրոպայ դպրոցէն դուրս գրողներ եղած ըլլային, եթէ նոյն մատենագրական լեզուն յաջորդ ժամանակներու ալ օրինակ թողուած չըլլար, անշուշտ քանի մը կտոր գաւառական գրութիւններ կ'ունենայինք այսօր ձեռքերնիս»⁵:

Այսօրնյանի ուսումնասիրությունը գլխավորապես նվիրված է արդի աշխարհաբարին, ուստի մեծ հայագետը նախ և առաջ փորձում է վերջինիս հիմքերը բացահայտել գրաբարի տիրույթում՝

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 44-45:

ապավինելով V դարի որոշ հեղինակների (Փ. Բուզանդ, Ղ. Փարպեցի....) լեզվում տեղ գտած շատ թե քիչ իրողությունների, որոնք շեղվում են գրաբարյան օրինաչափությունից և ինչ-որ չափով հարում են ժամանակակից աշխարհիկ լեզվին: Քննության առնելով հիշատակված լեզվական նյութը՝ ի վերջո հանգում է հետևյալ եզրակացության. «Եղած դիտողություններն ու բերված օրինակները գլխավորաբար երկու բան կը հաստատեն. մեյ մը՝ հին մատենագրական հայերենին ժամանակակից ընտանեկան կամ ռամկական հայերենի մը գոյութիւնը. և մեյ մ'ալ՝ որ հիմայ աշխարհաբարի յատուկ մնացած կամ գուտ աշխարհաբար երևցած բացատրութիւններ արդէն շատ հնուց կենդանի էին՝ մանաւանդ նոյն հասարակ լեզուին մէջ. կամ թէ ըսենք, գրաւոր լեզուին մէջ ցանցառ՝ բայց ընտանի խոսուածքի մէջ, որչափ կ'երևայ, սովորական էին»⁶: Ինչպէս կարելի է հասկանալ, Այտընյանը գրաբարը՝ իր իսկ խոսքով՝ բուն մատենագրական լեզուն, ըստ էության չի նույնացնում ժամանակի խոսակցական հայերենին: Մյուս կողմից էլ, ելնելով իր քննած լեզվական նյութից, ենթադրում է, թէ գուցէ նոր սկիզբ առնող աշխարհաբարի են բնորոշ նկատված իրողությունները. «....թէեւ գուցէ սկզբնաւորեալ աշխարհաբար մը՝ որ քանի մը դարէն պիտի լրանայ ու գրաբարէն զատուի»⁷: Այնուհետև Այտընյանը խոսում է այն մասին, որ հետին դարերում ընդօրինակողները կարող էին կամայական փոփոխություններ ու աղավաղություններ կատարել՝ չբացառելով նաև հակառակ երևույթը, որ կարող էին ռամկականի բուն հին ձևերը փոխել «ճշտագոյն գրաբարի»: Այս ամենով հանդերձ ի վերջո այսպիսի հետևություն է անում. «....յընդհանուրն առեալ՝ հարիւրաւոր եւ աւելի դէպքերուն վրայ ամենուն մէկանց չենք կրնար լիուլի վստահութիւննիս չդնել, մանաւանդ ուր որ ամէն

⁶ Նույն տեղում, էջ 62:

⁷ Նույն տեղում:

ձեռագիր օրինակներն իրարու միաբան են, կամ թէ երկու նոյն կարգի գրութիւններ իրարու վրայ կ'ելլեն. գորօրինակ Զգօնի տարակուսական մասերը Եփրեմի թարգմանութիւններէն կը ստուգուին, որ միննոյն լեզուաւ գրուած են. և ըստ այսմ՝ ուրիշներն ալ»⁸: Երբեմն նոյնիսկ այն տպավորությունն է առաջանում, թէ Այտընյանը «ռակորեն» ասելով նկատի է առնում բարբառային հայերենը, մանավանդ որ հաճախ իբրև ռակորեն հայերենին հատուկ իրողություններ ներկայացնում է այնպիսիք, որոնք ակնհայտորեն բարբառային են: Մինչդեռ աշխատության մեջ, ինպես և վերը նկատեցինք, բարբառային հայերենի համար գործածում է «գաւառական» տերմինը: Ահա հավելյալ մի օրինակ ևս. «....բայց նոյն Բ և Զ կարգերէն այնպիսի անսովոր *ուրիշներ* ունինք, որոնց՝ թէ իրօք **ռակական** էին, թէ **գաւառական** էին, թէ անձնական, թէ սիւսական գործածութիւններ, դժուարին է որոշ մեկնութիւն մը տալ»⁹:

Այտընյանի՝ V դարում հայերեն բարբառների գոյության վերաբերյալ տեսակետը հետագայում ամրապնդում և զարգացնում է XIX դ. մյուս նշանավոր հայագետը՝ Բ. Պատկանյանը: Նախ իրավացիորեն նկատում է, որ «չի կարելի պատկերացնել լեզու առանց բարբառների»¹⁰: Ապա մերժելով գրաբարի աղավաղման միջոցով հայ բարբառների առաջացման մինչ այդ և մասամբ տվյալ շրջանում գոյություն ունեցող տեսակետը՝ գրում է. «Արդի հայ բարբառները հանդիսանում են հին, մինչպատմական ժամանակաշրջանում գոյություն ունեցող բարբառների հետնորդները»¹¹:

Հետագայում նշված տեսակետի դեմ արտահայտվել և նոյնպիսի կարծիք է հայտնել նաև պրոֆեսոր Գ. Ղափանցյանը. «Ցայժմ

⁸ Նույն տեղում, էջ 63:

⁹ Նույն տեղում, էջ 74-75:

¹⁰ **Патканов К.**, *Исследование о диалектах армянского языка*, СПб., 1869, с. 2.

¹¹ Նույն տեղում, էջ 4:

գերիշխող կարծիքն էր, որ մեր արդի բարբառները ծագել են դասական հայերենից, բայց այդ գուրկ է գիտական հող ունենալուց, քանի որ դրա դեմ կան շատ լուրջ «լեզվային» և «ապալեզվային» խոչընդոտներ»¹²:

Հարցի քննությունը Ա. Ղարիբյանի «Հայ բարբառագիտություն» աշխատության էջերում: Հայ բարբառագիտությունը բուռն զարգացում է ապրում հատկապես 20-րդ դարի 40-50-ական թթ.: Ա. Ղարիբյանը «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ, բնականաբար, անդրադառնում է նաև հայերենի պատմական բարբառագիտության հարցերին: Աշխատանքի «Հայերեն բարբառների պատմությունից» բաժնում քննելով հին բարբառների հարցը՝ նախ գրում է. «Հայ էթնիկական լեզուն (բարբառների համաստեղությունն ու գրաբարը) ձևակերպվել ու որակ է դարձել հայկական էթնոսի, հայկական պետականության, հայկական ֆեոդալիզմի կազմավորման հետ միասին, մոտավորապես 2-րդ դարի սկզբներին և ք. մեր դարաշրջանը»¹³, ապա ավելացնում. «Պետությունը ղեկավարող տոհմի կամ տոհմախմբի լեզուն բոլոր «նախաբարբառների» համեմատությամբ հեղինակություն է ստանում և դառնում սոցիալական բարբառ՝ ընդհանուր լեզու ողջ իշխող դասակարգի համար: Նախկին տոհմական լեզուների խիստ փոփոխված վերապրուկները դառնում են հայերենի բարբառներ: Այդ բարբառները լինում են միմյանցից շատ հեռու և նույնիսկ անհասկանալի, բայց նրանց մեջ կային արդեն ընդհանուր դարձած այնքան կողմեր, որ բարբառները իբրև առանձին կամ անկախ լեզուներ, բացասվում էին»¹⁴: Ըստ լեզվաբանի՝ իր նշած իշխող դասակարգի ընդհանուր լեզուն հենց

¹² Տե՛ս **Ղափանցյան Գ.**, «Հայա-արմենական» լեզվախմբի ազգակցական բովանդակությունը, «Արարատ», թիվ 2-3, 1917, էջ 209:

¹³ Տե՛ս **Ղարիբյան Ա.**, *Հայ բարբառագիտություն*, Հեռակա Մանկավարժական Ինստիտուտի հրատ., Ե., 1947, էջ 40:

¹⁴ Նույն տեղում:

մեր իմացած գրաբարն է, որի ազդեցության ներքո, ինչպես և փոխադարձ ազդեցությամբ բարբառներն ավելի են մոտենում և միմյանց հասկանալի դառնում¹⁵:

Վկայակոչելով Անանուն Մեկնիչի քերականության մեջ տեղ գտած հետևյալ ուշագրավ վկայությունը՝ «Այլ էր իսկ ճշմարտապես և ի տեսակի խաւսիցն, որպէս բագուկ, պագուկ, փագուկ», գրում է. «Այդ վկայությունը պարզապես ասում է այն մասին, թե ժողովրդական լեզուն ունի տարբեր վարիանտներ՝ «տեսակ խաւսից», այսինքն բարբառներ, որոնք տարբեր սիստեմ են ներկայացնում, գոնե իրենց բաղաձայնական հնչյունական կազմության մեջ»¹⁶: Ապա որոշակիորեն քննելով հայերենի բարբառներում բաղաձայնական տեղաշարժերի հարցը՝ ի վերջո եզրակացնում է. «....Անանունի այդ սրամիտ վկայությամբ հաստատվում է այն կարծիքը, թե գրաբար լեզվի ամենազարգացած շրջանում անգամ մեր բարբառները գոյություն ունեին, ավելին – նրանք գոյություն ունեին համարյա նույն սիստեմով, նույն տարբերությամբ, ինչ որ այժմ»¹⁷: Անանուն Մեկնիչի վկայությունից բացի՝ հիշատակում է նաև VIII դարի քերական Ստեփանոս Սյունեցու հետևյալ ոչ պակաս կարևոր տեղեկությունը. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՍպերացին և զՉորրորդ Հայեցին և զՍիւնին և զԱրցախայինն. այլ մի միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ և աւգտակարք ի պատմութիւնսն, զի մի վրիպեսցի անընդէլ գոլով լեզուացն»: Վերջինից էլ հետևյալն է եզրակացնում. «Այս հեղինակը վկայում է հայերենի 7 շուրջերկրյա բար-

¹⁵ Նույն տեղում, էջ 41:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 53:

բառների մասին և ապա ոստանիկ (մայրաքաղաքների) լեզվի մասին. «շուրջերկրյա» բարբառներն անջատում է «միջերկրյա» բարբառներից իբրև անհասկանալի բարբառներ»¹⁸: Նաև նկատում է, որ մի քանի դար հետո Խույթի բարբառի մասին հիշատակություն ունի նաև Թովմա Արծրունին: Այդ ամենից գատ՝ առանձնապես կարևորում է Հովհաննես Դրասխանակերտցու հետևյալ վկայությունը պատմիչ Շապուհ Բագրատունու՝ «գեղջուկ բանիվ» գրելու մասին. «...ըստ իւրումն ժամանակի ընդանի գոլով նորա զրուցածն ամենայնի գեղջուկ բանիւ բաւական քեզ տայ պատճառս տեղեկութեան»¹⁹:

Ի վերջո հիմք ընդունելով նաև գրաբարյան մատենագրության մեջ առկա շեղումները՝ եզրակացնում է. «Այս և նման բազմաթիվ երևույթներ ցույց են տալիս, որ գրաբարը չէ, որ աղավաղվում է, որպեսզի հետո ստեղծվեն բարբառներ, այլ ընդհակառակն, գրաբար լեզվի կողքին գոյություն ունեին ժողովրդական լեզուներ, որոնց այս կամ այն ձևերը թափանցելով գրաբարի մեջ՝ խախտում էին նրա սիստեմը»²⁰:

Հարցի քննությունը Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության էջերում: Խնդրո առարկայի քննությունը այնուհետև առավել մանրամասնորեն տեսնում ենք մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության երկրորդ հատորում²¹: Լեզվաբանը նախ և առաջ քննում է այն հարցը, թե հայերենի ինչպիսի դրսևորում էր գրաբարը, և հանգում է հետևյալ եզրակացությանը. «Այսպես ուրեմն պիտի ընդունենք, որ Ե դարում առաջին անգամ գրի առնված լեզուն, որ հետո գրաբար

¹⁸ Նույն տեղում, էջ 50:

¹⁹ Նույն տեղում, էջ 51:

²⁰ Նույն տեղում, էջ 61:

²¹ **Աճառյան Հ.,** *Հայոց լեզվի պատմություն*, II մաս, Հայպետհրատ, Ե., 1951:

անունն ստացավ, նույն ժամանակի ժողովրդական խոսակցական լեզուն էր, և ժողովրդական ու գրական լեզուների տարբերությունը, որ այժմ սովորական երևույթ է ամեն տեղ, գոյություն չունեի այն ժամանակ մեր մեջ»²²: Ինչ վերաբերում է մատենագրության լեզվական տարբերություններին, որոնց հիման վրա լեզվաբանը մեսրոպյան հեղինակներին բաժանում է չորս դպրոցի (Եզնիկյան, Կյուրեղյան, Եփրեմյան և Ագաթանգեղյան), ապա դրանք համարվում են լոկ ոճական տարբերություններ: Օրինակ, ի հակադրություն այլ երկերի՝ անդրադառնալով իր իսկ խոսքով «փարթամ ու մթին ոճ ունեցող Փավստոս Բուզանդի» պատմությանը և մի քանի հատվածներ ներկայացնելով՝ լեզվաբանը եզրակացնում է. «Այս բոլորի մեջ մենք ուրիշ բան չենք տեսնում, եթե ոչ միևնույն բառարանը և միևնույն քերականությունը՝ ինչ որ մեսրոպյան շրջանի բոլոր գրվածքների մեջ: Տարբեր է միայն ոճը, խոսելու եղանակը, որ ունի հախուռն և անհարթ ձև»²³:

Այնուհետև անդրադառնալով հետմեսրոպյան շրջանում ի հայտ եկած բառերին ու ձևերին՝ գրում է. «Այն ձևերը, որոնք բոլորովին նոր էին հետմեսրոպյան շրջանի հայերենում, կամ նոր փոխառություններ են իրանական լեզվից և կամ հայերեն **գավառական** ձևեր, որոնք մեսրոպյան շրջանում դեռ դուրս եկած չէին իրենց անձուկ շրջանակից և հետմեսրոպյան շրջանին միայն տարածվելով Հայաստանի ուրիշ մասերում, դարձան ընդհանուր սեփականություն և մտան գրավոր լեզվի մեջ»²⁴: Մասամբ տարբերվող ձևերն էլ համարում է լեզվի հետագա զարգացման հետևանք՝ պայմանավորված նմանաբանության, ընդհանրացման և լեզվաբանական այլ օրենքներով: Սա նշանակում է, որ լեզվաբանը հետագայում ի հայտ

²² Նշվ. աշխ., էջ 101:

²³ Նույն տեղում, էջ 103:

²⁴ Նույն տեղում, էջ 108:

եկածը մեծ հաշվով պայմանավորում է գրաբարի հետագա փոփոխություններով, նոր դրսևորվող երևույթներով, բայց և, ինչպես նկատեցինք, գրաբարյան շրջանի համար սովորական է համարում նաև գավառականի, ասել է թե բարբառի առկայությունը:

Աշխատության մեջ առանձին բաժին է հատկացնում V դարի հայերեն բարբառների հարցի քննությանը՝ հենց այն վերնագրելով «Ե դարի հայերեն բարբառները»: Որպես V դարի հայերեն բարբառների վերաբերյալ փաստ առաջին հերթին հիշում է Եզնիկ Կողբացու հայտնի վկայությունը՝ «Քանզի յորժամ մեք ասեմք՝ թե սիք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ»: Նաև նկատի է առնում Փ. Բուզանդի գործածած «Հայաստանի վերնագաւառ» և «ստորին գաւառ» անվանումները: Եվ այս ամենից գատ՝ հատկապես կարևորում է այն հանգամանքը, որ իր մայրենի բարբառով չգրող ամեն ոք իր բարբառից անպայման կարող է որևէ հետք թողնել: Սակայն այդ դեպքում էլ, ինչպես և նկատում է Աճառյանը, այսպիսի հարցեր են առաջանում. «Բայց դժբախտությունն այն է, որ մենք չգիտենք և չենք էլ կարող իմանալ մեսրոպյան շրջանի պաշտոնական կամ կենտրոնական գրական լեզուն իր անխառն ձևի տակ, որպեսզի ամեն մի հեղինակի շեղումները բռնեինք: Չգիտենք նույն իսկ շատ երկերի հեղինակների անունը, ուր մնաց իմանալ նրանց որտեղացի լինելը, որպեսզի գոնե այդ միջոցով իմանայինք բարբառների որոշ հատկությունները»²⁵:

Մեծ լեզվաբանը նաև քննության է առնում Ն. Բյուզանդացու «Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք» մանրագինն աշխատությունը, որի շրջանակներում ներկայացվել է մեսրոպյան ողջ գրականությունից 624 բառ ու դարձված, որոնք միայն բնորոշ են եղել Կորյունին, Ագաթանգեղոսին, Բուզանդին, Մակաբայեցոց

²⁵ Նշվ. աշխ., էջ 116-117:

գրքերին ու Եվթաղին, սակայն չկան ուրիշ գործերում: Որոշ փաստեր ընդունելով, որոշ փաստեր մերժելով՝ ենթադրում է, որ Կորյունի լեզուն V դարի առանձին բարբառ է: Քանի որ Կողբացու (Այրաբատ) և Մեսրոպի (Տարոն) լեզուներից տարբեր է Կորյունի լեզուն, ուրեմն վերջինս կա՝ մ արևելյան, կա՝ մ արևմտյան գավառից է, իսկ որ գործածել է պարսկերենից փոխառյալ *ատրուշան*, *նուազ*, *գումարտակ* բառերը, պարսկական -*անի* հոգնակերտ մասնիկը և այլն, ենթադրում է, որ Կորյունը արևելքից է²⁶:

Եվ ի վերջո քննության առնված գրաբարյան նյութի հիման վրա եզրակացնում է, որ առկա տարբերությունները չեն կազմում բարբառի էությունը, որը ձայնաբանությունն է և քերականությունը: Այստեղից եզրակացնում է, որ մեսրոպյան շրջանում հայերենի բարբառները չկային, այսպիսով. «Այն տարբերությունները, որ կարելի էր նկատել զանազան գավառների խոսակցության միջև, կազմում էին ոչ թե բարբառային տարբերություններ, այլ ավելի ճիշտ բառով՝ ենթաբարբառային»²⁷:

Ուշագրավ է հատկապես հետևյալ դիտարկումը. «Համեմատելով արդի հայ բարբառները իրար հետ, դուրս բերելով նրանք կազմող տարբերությունները, և մոտավորապես ետ-ետ տանելով նրանք առաջ բերող զարգացման և բարեշրջության ընթացքը, կգտնենք, որ բոլոր այդ բարբառները ունին մի ծագում, նրանց հասարակաց աղբյուրը մեսրոպյան հայերենն է, ուրիշ խոսքով Ե դարի գրաբարը»²⁸: Փաստորեն Աճառյանը ժամանակակից բարբառների առաջացումը կապում է գրաբարի, ասել է թե այն ժամանակվա համընդհանուր խոսակցական լեզվի տրոհման և հետագա փոփո-

²⁶ Նույն տեղում, էջ 117-123:

²⁷ Նույն տեղում, էջ 125:

²⁸ Նույն տեղում, էջ 126:

խությունների հետ: Մինչդեռ վաղուց այդ տեսակետը մերժել և հակազդիտական էին համարել Ք. Պատկանյանը, Գ. Ղափանցյանը, ապա նշվածից սոսկ մի քանի տարի առաջ՝ Ա. Ղարիբյանը և ուրիշներ:

Աճառյանը ավելորդ չի համարում նաև անդրադառնալ քերականության մեկնիչների և այլոց՝ խնդրո առարկային առնչվող տարբեր վկայություններին: Նախ անդրադառնում է Թրակացու քերականության մեկնություններում հնչած որոշ մտքերի, բարբառների ու բարբառային ձևերի հիշատակումների, ինչպես. «Եւ Գորդայիցն իւրեանց գաղափար յատկական Մանայճ» (Անանուն մեկնիչ), «Եւ ըստ Գորդայիցն Մանայճ» (Մովսէս Քերթոյ): Այնուհետև քննության է առնում Ստեփանոս Սյունեցու հանրահայտ գրառումը, որին նախկինում անդրադարձել էր նաև Ա. Ղարիբյանը, ինչպես որ վերը արդեն հիշատակել ենք: Ի տարբերություն նախորդ լեզվաբանի՝ Աճառյանը տարբեր փաստերով ապացուցում է, որ Սյունեցու նշածները Հայաստանում ապրող 7 օտար ազգությունների լեզուներ են և ոչ թե հայերենի բարբառներ²⁹:

Նախորդ ուսումնասիրողների կողմից ևս քննված մի քանի պատմական վկայությունների և հարակից այլ հարցերի անդրադառնալուց հետո եզրակացնում է՝ 1. «Հինգերորդ դարում հիշատակված են Վերին և Ստորին Հայաստանի բարբառներ, որոնց վրա կարող ենք դեռ ավելացնել այսպես կոչված արևելյան և արևմտյան բարբառներ», 2. «Այս բարբառները սակայն չունեն իրարից անջըրպետող խոշոր տարբերություններ և բոլոր հայերը հեշտությամբ հասկանում էին իրար: Այնպես որ այդ բարբառները կարող ենք կոչել ոչ թե իրապես բարբառ, այլ ենթաբարբառ», 3. «Հայաստանի հողի վրա, և հատկապես ծայրամասերում, խոսվում էին 19 օտար

²⁹ Նույն տեղում, էջ 128-132:

լեզուներ, որոնք երկրորդ դարում նվաճված մանր ազգերի լեզուներն էին....»³⁰:

Այնուհետև անցնում է լեզվական այն տարբերությունների քննությանը, «որ կարելի էր նկատել Ե դարի հայ բարբառների (ավելի ճիշտ, ենթաբարբառների) միջև»³¹: Այստեղ քննում է բաղաձայնական տեղաշարժերի հարցը, ինչպես որ հիշատակել էր Անանուն մեկնիչը՝ բազուկ // պազուկ // փազուկ օրինակներով, ապա նաև այն բառերը, որոնք սովորական էին այս կամ այն բարբառում, բայց չկային կենտրոնական բարբառում, ուստի և տեղ չեն գտել V դարից ավանդված գրականության մեջ:

Հ. Աճառյանի վերոհիշյալ աշխատության առաջաբանը գրել է լեզվաբան Է. Աղայանը: Այն կարելի է համարել նշված աշխատության գրախոսական, որի մեջ լեզվաբանը անդրադառնում է նաև հեղինակի՝ V դարի հայ բարբառների մասին տեսակետին և այդ առնչությամբ որոշ իրողությունների³²: Նախ նկատում է, որ Հ. Աճառյանը ոչ միայն դասակարգում է իր ժամանակի հայերեն բարբառները, այլև մանրակրկիտ քննության է ենթարկում հին մատենագրության մեջ եղած այն բոլոր իրողությունները, որոնք վերաբերում են V դարի հայերեն բարբառներին, ապա լեզվական փաստերի հիման վրա որոշում է առանձին բարբառների առաջացման մոտավոր ժամանակի հարցը: Է. Աղայանը բարձր է գնահատում լեզվական փաստերի մանրամասն վերլուծությունը և գիտականորեն հիմնավորումը, սակայն հայերենի բարբառների առաջացման մասին եզրակացությունները առարկելի է համարում: Նախ չի ընդունում Հ. Աճառյանի այն կարծիքը, որ V դարում հայերեն բարբառների

³⁰ Նույն տեղում, էջ 134:

³¹ Նույն տեղում, էջ 135:

³² Տե՛ս նշվ. աշխ. առաջաբանում, էջ XVI-XVIII:

փոխարեն առկա են եղել միայն ենթաբարբառներ: Նաև անընդունելի է համարում մի շարք բարբառների ամենաբնորոշ հնչյունափոխությունների դադարի ժամանակաշրջանով այդ բարբառների ծագման ժամանակը որոշելը: Է. Աղայանը նկատում է, որ բարբառները համաժողովրդական ընդհանուր լեզվի ճյուղավորումներն են, ուստի առանց ընդհանուր լեզվի բարբառներ լինել չեն կարող, նույն կերպ էլ ենթաբարբառները բարբառների ճյուղավորումներն են: Այսպիսով, ինչպես առանց ընդհանուր լեզվի բարբառներ չեն կարող լինել, այդպես էլ առանց բարբառների ենթաբարբառներ լինել չեն կարող: Հետևաբար, ըստ Աղայանի, Աճառյանը պետք է ընդուներ նաև բարբառների գոյությունը V դարում: Նկատենք, որ նշված աշխատության նույն «Ե դարի հայերեն բարբառները» հատվածում Աճառյանն ինքն է հետևյալը գրում. «Լեզվաբանության ներածությունը սովորեցնում է մեզ, որ մարդկային լեզուները բաժանվում են զանազան լեզվաբների, որոնց ստորաբաժանումներն են ճյուղ, լեզու, բարբառ և ենթաբարբառ»³³: Բացի դրանից՝ մի այլ տեղ էլ գրում է, որ բարբառի և ենթաբարբառի միջև բացարձակ սահմանագիծ չկա³⁴: Ելնելով այդ ամենից՝ Աղայանը ի վերջո գրում է, որ Աճառյանը ենթաբարբառ տերմինը կարող էր պայմանականորեն գործածել՝ ցույց տալու համար, որ V դարում բարբառային այնպիսի խիստ տարբերություններ չկային³⁵: Այնուհետև վկայաբերում է ռուսերեն բարբառների օրինակը, որոնց տարբերությունները ավելի քիչ են, քան Արցախի բարբառի որոշ ենթաբարբառների տարբերություններ³⁶: Այսպիսով, ի վերջո հանգում է հետևյալ եզրակացության. «...հինգերորդ դարում,

³³ Նշվ. աշխ., էջ 123:

³⁴ Նշվ. աշխ., էջ 103:

³⁵ Նշվ. աշխ. առաջաբան, էջ XVII:

³⁶ Նույն տեղում:

անշուշտ, կային հայերեն բարբառներ, որոնք, սակայն, թե՛ քանակով շատ ավելի քիչ էին, քան ասենք 19-րդ դարի բարբառները, և թե՛ ավելի քիչ տարբերություններ ունեին իրենց բառային հիմնական ֆոնդի ու քերականության մեջ»³⁷:

Հարցի քննությունը Ա. Գրիգորյանի «Հայ բարբառագիտության դասընթաց»-ում: Առհասարակ լեզու և բարբառ, գրական լեզու և բարբառ փոխհարաբերությունների³⁸, ապա մասնավորապես հայ բարբառների առաջացման³⁹ հարցերը հետազայում քննել է Ա. Գրիգորյանը իր «Հայ բարբառագիտության դասընթաց» աշխատության մեջ: Լեզվաբանը նախ ներկայացնում է այլազգի հայագետներ Հ. Հյուբշմանի, Ա. Տոմսոնի և Ա. Մեյեի, ապա նաև Հ. Աճառյանի այն տեսակետը, թե V դարում հայերենի բարբառներ չեն եղել, առաջացել են հետագայում, մասնավորապես VIII-րդ դարից սկսած՝ գրաբարի աղավաղման ճանապարհով: Այնուհետև հիշատակելով, որ, ըստ մարքսիստական լեզվաբանական ուսմունքի, ցեղերի ու ժողովուրդների համընդհանուր լեզուների հետ միասին եղել են նաև նրանց բարբառներն ու խոսվածքները, գրում է. «Այս կարևոր դրույթը հաստատվում է V-VIII դարերում հայ բարբառների գոյության մասին մեր պատմիչների արժեքավոր ոչ քիչ վկայություններով և գրավոր աղբյուրների միջոցով մեզ հասած բարբառային լեզվական բազմաթիվ փաստերով»⁴⁰: Գրիգորյանը հիշատակում է թե՛ Կորյունի վկայությունները և թե՛ VIII դարի մեկնիչ Ստեփանոս Սյունեցու վկայությունը: Հարելով Ա. Ղարիբյանի կարծիքին՝ Սյու-

³⁷ Նույն տեղում, էջ XVIII:

³⁸ **Գրիգորյան Ա.**, *Հայ բարբառագիտության դասընթաց*, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1957, էջ 21-31:

³⁹ Նշվ. աշխ., էջ 49-57:

⁴⁰ Նույն տեղում, էջ 50:

նեցու հիշատակած բարբառներն ու խոսվածքները, ի տարբերություն Աճառյանի, համարում է հայերենի բարբառներ և ոչ թե Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների լեզուներ: Գրիգորյանը կարևորում է նաև Մ. Խորենացու պատմության մեջ տեղ գտած հետևյալ մտքերը՝ «Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական», «Խոստանայր հայկականացս լեզուաց առնել նշանագիր», ապա հիշում է Եզնիկի հանրահայտ տեղեկությունը, Անանուն մեկնիչի՝ բաղաձայնական տեղաշարժի մասին վկայությունը՝ վերջինիս «տեսակ խաւսից» արտահայտությունը նույնական համարելով հայերենի բարբառներին: Այդ տեղեկությունները, ինչպես և վերը նկատեցինք, կարևորում էր նաև Աճառյանը: Դեռ ավելին, մանրակրկիտ քննում է հին մատենագրության ընձեռած լեզվական նյութը և շատ իրողություններ վերագրում բարբառային տարբերություններին: Ուղղակի միայն գրում է, որ V դարում հայերենի բարբառային տարբերությունները այնքան խոր չեն եղել՝ պայմանականորեն այն համարելով ենթաբարբառային տարբերություն: Հենվելով պրոֆեսոր Աճառյանի նկատած օրինակներին և համապատասխան վերլուծություններին՝ Ա. Գրիգորյանը եզրակացնում է. «Մեր հին մատենագրության մեջ հայերենի տարբեր բարբառներից մտած հնչյունական, բառային և քերականական այս օրինակները բոլորովին անվիճելի են դարձնում հայ բարբառների գոյությունը V և նրանից առաջ եղած դարերում»⁴¹: Այնուհետև դիտարկելով և հակազդիտական համարելով Ն. Մառի և իր հետևորդների այն կարծիքը, որ գրաբարը և հայերենի բարբառները առաջացել են լեզվական երկու տարբեր հիմքերից՝ իբր առաջինը՝ «հայկական», երկրորդը՝ «արմենական»⁴², ի վերջո եզրակացնում է. «....կարելի է

⁴¹ Նույն տեղում, էջ 54:

⁴² Նույն տեղում, էջ 56:

ենթադրել, որ մինչև V դարը առաջացել են այնպիսի բարբառներ, ինչպես, օրինակ՝ Կորճա, Ագուլիսի, Արարատյան, Ղարաբաղի, Խութայի և այլն: V դարից են առաջացել այն բարբառները, որոնք, մասնավորապես իրենց քերականական կառուցվածքով, շատ են նման գրաբարին: Այդ բարբառներից են, օրինակ, Պոլսի և *կը* ճյուղին պատկանող մի քանի այլ բարբառներ»⁴³:

Հարցի քննությունը 1958-60 թթ. «Պատմա-բանասիրական հանդեսի» հոդվածներում և այլ ուսումնասիրություններում: Հայ բարբառների ծագման հարցի շուրջ 1958-60 թթ. «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում ծավալվել է բանավեճ հայ ականավոր լեզվաբաններ Ա. Ղարիբյանի, Է. Ադայանի, Գ. Սևակի, Գ. Ջահուկյանի և Ս. Ղազարյանի միջև: Այդ քննարկումներին ամփոփ ձևով անդրադարձել, ապա և իր եզրակացություններն է կատարել լեզվաբան Վ. Կատվայանը 2018 թ. նույն հանդեսում տպված հոդվածով⁴⁴: Հետևաբար անդրադառնալու ենք նաև նրա նկատառումներին և եզրակացություններին: Նախ հիմնական գծերով ներկայացնենք հիշատակված լեզվաբանների դիտարկումները: Ա. Ղարիբյանը հանդեսի առաջին իսկ համարում տպագրված «Հայ բարբառագիտության հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում» հոդվածում⁴⁵, անդրադառնալով նաև հայ բարբառների առաջացման խնդրին, առաջ է քաշում այն դրույթը, որ հայերենի բարբառներն առաջացել են ոչ թե առանձին-առանձին, այլ «ասոցիացիաներով»⁴⁶: Լեզվաբանը, քննելով հայ բարբառների և հնդեվրոպական նախալեզվի բաղադրյալական համակարգերի առնչությունները, նկատում

⁴³ Նույն տեղում, էջ 57:

⁴⁴ Կատվայան Վ., *Հայ բարբառների ծագման հարցը «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում* (1958–1960 թթ.) - ՊԲՀ, 2018, № 2, էջ 20–33:

⁴⁵ Ղարիբյան Ա., *Հայ բարբառագիտության հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում*. - ՊԲՀ, 1958, № 1, էջ 18–38:

⁴⁶ Նույն տեղում, էջ 23:

է, որ ամենահինը Փոքր Հայքի բարբառների բաղաձայնական համակարգն է: Այստեղից էլ եզրակացնում է, որ հայոց լեզուն Հայաստանում և հարակից վայրերում տարածվել է Փոքր Հայքից, ասել է թե՛ հնդեվրոպական նախալեզվից անջատվելուց հետո հայերենի հնագույն հայրենիքը եղել է Փոքր Հայքը⁴⁷: Իսկ գրաբարի հնչյունական համակարգը համարում է համեմատաբար ուշ գոյացում⁴⁸: Հոդվածում բարձրացված հարցերը հիմք են հանդիսանում հետագա քննարկումների: Ինչպես նկատում է Վ. Կատվալյանը, արծարծվում են հետևյալ հիմնական հարցերը. «V դարում և դրանից առաջ հայերենը բարբառներ ունե՞ր, թե ոչ, բ) արդի բարբառները հին բարբառային վիճակների շարունակությո՞ւնն են, թե՞ առաջացել են գրաբարի քայքայման հետևանքով»⁴⁹:

Այնուհետև նշված հարցերը քննում է Է. Աղայանը «Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին» հոդվածում⁵⁰: Ինչպես և նկատում է Վ. Կատվալյանը, Աղայանի հոդվածը ընդհանուր առմամբ նվիրված է Աճառյանի տեսության պաշտպանությանն ու նորովի մեկնաբանությանը, ինչպես նաև Ա. Ղարիբյանի՝ հարցի վերաբերյալ ունեցած այլ պատկերացումների քննադատությանը⁵¹:

Գրաբարյան քերականական իրողությունների վերլուծությամբ Է. Աղայանը եզրակացնում է, որ «գրաբարն ավելի հնատիպ է ու հին, քան մեր բարբառներից որևէ մեկը, և, հետևաբար, մեր բարբառներն առաջացել են գրաբարի կազմավորումից հետո և հենց

⁴⁷ Նույն տեղում, էջ 38:

⁴⁸ Նույն տեղում, էջ 35:

⁴⁹ Կատվալյան Վ., նշվ. աշխ., էջ 21:

⁵⁰ Աղայան Է., *Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին*.– ՊԲՀ, 1958, № 2, էջ 211–233:

⁵¹ Կատվալյան Վ., նշվ. աշխ., էջ 24:

գրաբարից, որ հին հայերենի գրավոր ավանդված վիճակն է»⁵²: Միանգամայն ճիշտ ու սպառիչ համարելով Հ. Աճառյանի կարծիքը V դարի հայ բարբառների վերաբերյալ՝ վերջնականապես եզրակացնում է, որ ժամանակակից բոլոր բարբառները գրաբարի ծնունդ են, սաղմնավորվել են II-IV դարերում և ձևավորվել VII-XII դարերում. «Այսպես ուրեմն՝ հայերեն բարբառներից և ոչ մեկն էլ գրաբարից հին չէ: Բոլոր հայերեն բարբառները ներկայացնում են գրաբարյան համակարգի հետագա զարգացումը՝ տարբեր ուղղություններով ու ձևափոխություններով»⁵³:

Վերոհիշյալ հարցերը քննում է նաև լեզվաբան Գ. Սևակը իր «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» հոդվածում⁵⁴: Լեզվաբանը նախ չհիմնավորված է համարում Ղարիբյանի՝ հայ բարբառների նախագրաբարյան ծագման, ինչպես նաև հնդեվրոպական նախալեզվի հետ բարբառներից մի քանիսին հատուկ շնչեղ ձայնեղների ուղղակի կապի մասին պնդումները⁵⁵: Ապա անդրադառնալով այլ հարցերի ևս՝ ի վերջո՝ եզրակացնում է, որ Ղարիբյանի՝ հայ բարբառների ծագման մասին ողջ տեսությունը անհիմն է, քանի որ անտեսվում են հայոց լեզվի ու նրա բարբառների զարգացման ներքին օրենքները⁵⁶: Ինչ վերաբերում է Աղայանի դիտարկումներին, Գ. Սևակը կարծում է, որ նրա ասածների մեջ կան շատ ճշմարտություններ, որոնց հանգեցրել են լեզվական փաստերը և պատմահամեմատական մեթոդի ճիշտ կիրառումը⁵⁷: Միայն թե չի ընդունում հին և նոր բարբառների վերաբերյալ Է. Աղայանի առաջ քաշած նոր դրույթը՝ միաժամանակ անհերքելի համարելով «բոլոր

⁵² **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 222:

⁵³ Նույն տեղում, էջ 225:

⁵⁴ **Սևակ Գ.**, *Հայ բարբառների ծագման հարցի շուրջը*. – ՊԲՀ, 1959, № 1, էջ 224–245:

⁵⁵ Նույն տեղում, էջ 226:

⁵⁶ Նույն տեղում, էջ 240–241:

⁵⁷ Նույն տեղում, էջ 244:

հնդեվրոպաբան հայագետների այն դրույթը, որ մեզ ծանոթ բոլոր հայ բարբառների հնչյունական և քերականական համակարգը հին հայերենի՝ գրաբարյան համակարգից է սերել և չի կարող ավելի հին լինել նրա համակարգից»⁵⁸: Պետք է նաև ավելացնենք, որ Գ. Սևակը տարբերում է «գրաբար գրական լեզուն՝ գրաբարյան համակարգից, որը շատ ավելի հին է, քան մեզ ծանոթ գրաբար լեզուն»⁵⁹:

Այնուհետև խնդրո առարկային առավել հստակ անդրադառնում է Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը» հոդվածում⁶⁰: Նախ և առաջ հավաստում է հետևյալը. «Հայագիտության զարգացման ժամանակակից էտապում այլևս վիճելի չպետք է համարել նախ՝ V դարում հայերենի բարբառների գոյության հարցը և երկրորդ՝ բարբառներում այնպիսի արխայիկ գծերի առկայության հարցը, որոնք գրաբարի հուշարձաններում պահպանված գծերից ավելի հին են: Վիճելի պետք է համարել լոկ V դարի հայերենի բարբառների ծագման, բնույթի, քանակի և ժամանակակից բարբառների հետ ունեցած փոխհարաբերության հարցերը»⁶¹: Ապա լեզվական որոշակի վերլուծություններից հետո, ի հակադրություն Ա. Ղարիբյանի տեսակետի, հանգում է հետևյալ եզրակացությունների. «1) գրաբարյան ձևերը ընդհանուր առմամբ հնդեվրոպական նախաձևերին ավելի մոտ են, քան բարբառային ձևերը, 2) գրաբարյան ձևերը փոխատու լեզվի ձևերին ավելի մոտ են, քան բարբառային ձևերը, 3) բարբառային ձևերը կարելի է հնդեվրոպական և հին փոխատու աղբյուրի ձևերի հետ կապել հին հայերենի ձևերի միջնորդությամբ միայն»⁶²:

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ **Ջահուկյան Գ.**, *Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը*.– ՊԲՀ, 1959, № 2–3, էջ 282–319:

⁶¹ Նույն տեղում, էջ 282:

⁶² Նույն տեղում, էջ 303:

Միաժամանակ սխալ է համարում նաև Աճառյանի, ապա Աղայանի և այլոց այն տեսակետը, որի համաձայն՝ ժամանակակից բարբառները ծագել են գրաբարից ու նրա հետագա աղավաղումներն են. «գրաբար ասելով պետք է հասկանալ հին գրական հայերենը, իսկ գրական լեզուն չի կարող սկիզբ տալ բարբառների»⁶³: Ըստ լեզվաբանի՝ «պետք է համապատասխանաբար տարբերել հին շրջանի կամ հին հայերենի բարբառներ, միջին շրջանի կամ միջին հայերենի բարբառներ և նոր շրջանի կամ նոր հայերենի բարբառներ. սակայն չի կարելի կարծել, որ նոր շրջանի բարբառները ուղղագծորեն գալիս են միջին շրջանի բարբառներից, սրանք էլ հին շրջանի բարբառներից, վերջիններս էլ նախահինհայերենյան (նախագրաբարյան) շրջանի բարբառներից»⁶⁴: Ջահուկյանի կարծիքով՝ մինչև XI–XIII դդ. հայ բարբառների տարբերությունները գերազանցապես հնչյունական-բառապաշարային էին, XII դարից հետո միայն սկսում են գերակշռող դիրք գրավել ձևաբանական տարբերությունները⁶⁵:

Լեզվաբան Ս. Ղազարյանը «Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը» հոդվածով⁶⁶ ամփոփում է «Պատմաբանասիրական հանդեսի» էջերում ծավալված բանավեճը: Նախ նկատում է, որ Է. Աղայանը, Գ. Սևակը և Գ. Ջահուկյանը, հայ բարբառների ծագման վերաբերյալ Ա. Ղարիբյանի տեսակետին հակադրվելով, հիմնականում պաշտպանում են Ա. Մեյեի և Հ. Աճառյանի այն կար-

⁶³Նույն տեղում, էջ 313:

⁶⁴Նույն տեղում, էջ 310–311:

⁶⁵Նույն տեղում:

⁶⁶ **Ղազարյան Ս.**, *Հայերենի բարբառների և նրանց ծագման հարցի շուրջը*.– ՊԲՀ, 1960, № 3, էջ 172–192:

ծիքը, որ գրաբարն ավելի մոտ է հնդեվրոպական հիմնալեզվի վիճակին, քան որևէ բարբառ⁶⁷: Ապա վերլուծելով բոլոր տեսակետները՝ հանգում է հետևյալ հիմնական եզրակացություններին, որոնք իր հոդվածում համախմբված ներկայացնում է լեզվաբան Վ. Կատվայանը. «ա) կասկածից վեր է, որ ժամանակակից որևէ բարբառ չի կարող իր արդի վիճակով ավելի հին լինել, քան գրաբարը, սակայն սխալ է հայերենի բարբառների արդի վիճակի իրողությունները նկատի ունենալով՝ պնդել, թե դրանք գրաբարից հին չեն, ինչպես նաև չի կարելի պնդել, թե հայերենը V դարում չի ունեցել իր բարբառները, բ) հայերենի բարբառների որոշ մասը առաջացել է հայ ժողովրդի մեջ ձուլված ցեղերի լեզուների հիման վրա՝ մ. թ. ա. VIII–II դդ. ընթացքում, ընդ որում՝ հայերենի բարբառների գոյությունը պետք է ընդունել այն ժամանակվանից, երբ կազմավորվել է հայ ժողովուրդը, միաժամանակ՝ առանձին բարբառներ և բարբառախմբեր առաջացել են ավելի ուշ շրջանում՝ V դարից հետո, գ) գրաբարը ձևավորվել է որևէ բարբառի կամ բարբառների հիման վրա, այն չի քայքայվել, արձանագրվելով V դարում՝ պահպանվել է անփոփոխ ձևով»⁶⁸:

Խնդրո առարկայի առնչությամբ ուշագրավ են նաև հետևյալ դիտարկումները. Ս. Ղազարյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ նկատում է, որ հայոց էթնիկական լեզուն զարգացման բարձր աստիճանի է հասնում Արտաշես Առաջինի և հատկապես Տիգրան Երկրորդի օրոք, «երբ Հայաստանի տարածքում ապրող մի քանի միլիոնանոց ժողովրդի բոլոր հատվածները իրենց հայ էին համարում և կապված էին միմյանց հետ»⁶⁹: Հայաստանը այդ

⁶⁷ Նշվ. աշխ., էջ 173:

⁶⁸Տե՛ս **Կատվայան Վ.**, *Հայ բարբառների ծագման հարցը «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում (1958–1960 թթ.)*.– ՊԲՀ, 2018, № 2, էջ 31:

⁶⁹Տե՛ս **Ղազարյան Ս.**, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Երևանի համալսարանի հրատ., Ե., 2006, էջ 62:

Ժամանակաշրջանում տնտեսության զարգացմանը զուգահեռ մշակութային բուռն վերելք է ապրում: Մեծ զարկ է ստանում նաև ժողովրդական բանահյուսությունը, որի տարածումն էլ նպաստում է «հայ գրականության զարգացմանը և Տիգրան Երկրորդի թագավորության շրջանում պետական լեզվի ֆունկցիաներ կատարող հայոց համաժողովրդական լեզվի մշակմանն ու տարածմանը»⁷⁰: Նշվածին անմիջապես ավելացնում է. «Սակայն այդ դեռևս չի նշանակում, թե հայ համաժողովրդական լեզուն չուներ իր բարբառները այդ շրջանում: Հայոց լեզվի բարբառները ինչպես այդ ժամանակ, նույնպես և դրանից առաջ գոյություն են ունեցել: Դրանց մի մասը հավանաբար մոտ է եղել համաժողովրդական լեզվին, իսկ մյուս մասը իր հիմնական դրսևորումներով՝ բավականաչափ հեռու, թեև գիտակցվել է իբրև հայերենի բարբառներ»⁷¹: Մեկ այլ աշխատության մեջ կոնկրետ անդրադառնում է տարբեր լեզվափուլերի գրական լեզուների ձևավորմանը. «Հայոց գրական լեզուների՝ գրաբարի, միջին հայերենի և ժամանակակից հայերենի կազմավորման հիմքում ընկել են տերիտորիալ առանձին բարբառներ: Նրանք մշակվել ու կատարելագործվել են բարբառների ֆոնի վրա, բայց տարբեր շրջաններում տարբեր առնչակցությունների մեջ լինելով ինչպես գրական լեզվի հիմքում ընկած բարբառի, նույնպես և հայերենի մյուս բարբառների հետ»⁷²: Այնուհետև ավելացնում է. «Գրաբարը մշակվել է հայերենի մի՝ Արարատյան բարբառի, միջին հայերենը՝ հիմնականում կը ճյուղի մի շարք բարբառների, իսկ ժամանակակից հայերենը՝ Արարատյան և Պոլսի բարբառների հիման վրա»⁷³: Ս. Ղազարյանը նկատում է, որ Արարատյան

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Նշվ. աշխ., էջ 63:

⁷² Տե՛ս **Ղազարյան Ս.**, *Հայոց գրական լեզվի պատմություն*, Հայպետհրատ, Ե., 1961, էջ 6-7:

⁷³ Նույն տեղում, էջ 7:

բարբառը երկար ժամանակ օգտագործվել է որպես պետական-պաշտոնական լեզու և այդպիսով այնքան է մշակվել ու կատարելագործվել, որ հայոց գրերը ստեղծելու ժամանակաշրջանում դարձել է ամենահասկանալի բարբառը՝ ըստ էության կատարելով համաժողովրդական լեզվի դերը⁷⁴:

Հայ բարբառագիտական միտքը լիովին նոր հարթություն է տեղափոխվում ակադեմիկոս Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությամբ⁷⁵, որտեղ բարբառների հարցը քննվում է թե՛ համաժամանակյա և թե՛ տարածամանակյա հայեցակետով: Մեզ, բնականաբար, տվյալ դեպքում հետաքրքրում է երկրորդ հայեցակետը: Լեզվաբանը պատմահամեմատական բարբառագիտության, հնդեվրոպական լեզուների և մասնավորապես հայոց լեզվի համեմատական քերականության տվյալներով փորձում է վերականգնել հայերենի զարգացման տարբեր շրջանների բառային և կառուցվածքային առանձնահատկությունները: Ելնելով այդ տվյալներից՝ գրում է. «Հաշվի առնելով հայոց լեզվի համեմատական քերականության տվյալները՝ կարելի է գաղափար կազմել հայոց լեզվի հնագույն բարբառային տարբերությունների և բարբառային արխիվզմների մասին: Բնականաբար պետք է կարծել, որ հայերենի՝ հնդեվրոպական ընդհանրությունից առանձնապես ժամանակ պետք է արդեն գոյություն ունենային բարբառային մասնակի տարբերություններ, և որ հայ ժողովրդի բոլոր հատվածների լեզուն հենց սկզբից չէր կարող լիովին նույնական լինել: Հնարավոր է, որ այս կարգի որոշ տարբերություններ պահպանվեին

⁷⁴ Նույն տեղում:

⁷⁵ **Ջահուկյան Գ.**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1972:

բարբառներում և նույնիսկ մուտք գործեին գրական հուշարձանների մեջ»⁷⁶: Այնուհետև աշխատության «V դարի բարբառների հընչյունա-քերականական հատկանիշները (գուգաբանությունները)» բաժնում նշում է, որ գուգաբանությունների վերականգնման համար երկու հիմնական ուղի կա՝ ետադարձ և անմիջական՝ այն բացատրելով այսպես. «....ա) ժամանակակից բարբառների համար ընտրված 100 հատկանիշներից նորագոյացումները բացառելու միջոցով ըստ հնարավորին թողնում ենք այն հատկանիշները, որոնք պետք է հատուկ լինեին V դարին ըստ համեմատական քերականության ու լեզվի պատմության տվյալների. բ) ի մի ենք բերում V դարի բարբառների վերաբերյալ մատենագրական տվյալներն ու վկայությունները և գումարում առաջին եղանակով ստացած տվյալներին»⁷⁷: Այդպիսով ստանում է 22 հնչյունական և 18 քերականական հատկանիշ: Լեզվաբանը նկատում է, որ մի շարք դեպքերում այդ ձևերը հակադրվում են որպես նորմավորված գրաբարյան և սկզբնավորվող աշխարհաբարյան ձևեր, նշում, որ դրանք խնամքով հավաքված են Ա. Այտընյանի և հետագա այլ հետազոտողների կողմից, սակայն առանց աշխարհաբարյան ձևերի բարբառային տարբերակման: Միաժամանակ նկատում է. «....մի կողմից V դարում առկա էին գրաբարին համեմատաբար մոտ և համեմատաբար հեռու տերիտորիալ շրջաններ (տարածքներ), որոնց տարբերությունը բարբառային արժեք ուներ, մյուս կողմից՝ սաղմնավորվող աշխարհաբարյան ձևերի մեջ արդեն առկա էին՝ որոշ տարբերություններ, որոնք հետագայում խորացան՝ հասցնելով ժամանակակից բարբառային տարբերություններին»⁷⁸: Ապա շատ թե քիչ ստույգ լեզվական տվյալների հիման վրա

⁷⁶ Նշվ. աշխ., էջ 161-162:

⁷⁷ Նույն տեղում, էջ 163:

⁷⁸ Նույն տեղում, էջ 168:

անցնում է V դարի բարբառների բազմահատկանիշ դասակարգմանը, կազմում համապատասխան աղյուսակներ, իհարկե նաև նկատում դրանց մոտավոր բնույթը. «Աղյուսակը բնականաբար խիստ մոտավոր ձևով է արտահայտում V դարի բարբառային վիճակը: Այն կարող է համարվել միայն նախնական փորձ հետագա ավելի ճշգրիտ դասակարգումների համար»⁷⁹:

Ուշագրավ են նաև Վ. Առաքելյանի դիտարկումները «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության» աշխատության⁸⁰ շրջանակներում: Լեզվաբանը գրական լեզվի, խոսակցական լեզվի և բարբառների փոխհարաբերության վերաբերյալ հետևյալ կարևոր միտքն է արտահայտում. «Գրական լեզվին զուգընթաց են երկու լեզվական համակարգեր՝ խոսակցական լեզուն և բարբառը: Այս երկուսն էլ մեր գրական լեզվի ողջ պատմության ընթացքում ուղեկից են եղել վերջինիս, ազդել են նրա վրա, ճակատագրական նշանակություն են ունեցել նրա ձևավորման ու վերջնական կերպավորման գործընթացում»⁸¹: Իսկ գրաբարի և բարբառների առնչությունները քննելիս նկատում է, որ համաժողովրդական լեզուն գործածել սկսողները մտահոգ են եղել ժողովրդին հասկանալի լեզվով գրել, ուստի և այսպիսի հետևություն է անում. «Հենց այդ է պատճառը, որ հսկայական Աստվածաշունչը թարգմանված է այդպիսի պարզ ու ջինջ մի հայերենով: Թարգմանիչները չեն խորշել պարզախոս, մինչև իսկ հասարակախոս բառերից ու դարձվածքներից, որոնց շնորհիվ այդ օտար գիրքը դարձել է հայերեն կենդանի խոսքի ու ասությունների մի անփոխարինելի թանգարան»⁸²: Ինչ վերաբերում է գրաբարյան տեքստերում

⁷⁹ Նշվ. աշխ., էջ 189:

⁸⁰ **Առաքելյան Վ.**, *Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար)*, Հայկական ՄԱԿ ԳԱ հրատ., Ե., 1981:

⁸¹ Նշվ. աշխ., էջ 23:

⁸² Նույն տեղում, էջ 76:

նկատվող բարբառային իրողություններին, դրանց վերաբերյալ այսպիսի դիտարկում է անում. «Բարբառային տարրերը իրենց զգացնել են տալիս նաև հնչյունաբանորեն: Որքան էլ որ հրատարակությունների մեջ հրատարակիչները սրբագրում են ըստ գրաբարի, այնուամենայնիվ նկատում ենք կանոնիկության սահմաններից դուրս միտող հնչյունական տարբերակումներ, որոնք այլ կերպ չեն կարող բացատրվել, քան այն, որ բարբառային հնչյունափոխական երևույթներ են»⁸³: Այդ առումով կարևոր է նաև լեզվաբանի հետևյալ միտքը. «Այտընյանը բազմաթիվ ոչ կանոնիկ լեզվական այդ երևույթները բերելով՝ նշում է, որ դրանք աշխարհիկ կամ ռամկերեն լեզվի ներթափանցումներ են: Իբր թե գրական գրաբարին զուգընթաց կար նաև այդպիսի մի ընդհանուր ռամկերեն, մինչդեռ հիշյալ անկանոնիկ երևույթները բարբառային տարրեր են և այն էլ գրական լեզու եկած ո՛չ միայն մի բարբառից»⁸⁴: Տեղին է հիշել նաև իր առանձնացրած և բարբառային դիտվող բառերի վերաբերյալ հետևյալ նկատառումը. «Ներկայիս բարբառագետների խնդիրն է այս բառերը հայտնաբերել բարբառներում և բացատրել, որոնցից շատերը դեռևս կարող են մնացած լինել, իսկ հետագայում անդարձ կորչելու են»⁸⁵: Գրաբարյան մատենագրության մեջ վկայված նմանատիպ լեզվական իրողությունները վերհանելուն և բարբառային աղերսները բացահայտելուն են միտված նաև տողերիս հեղինակի մի քանի հոդվածները ⁸⁶:

⁸³ Նույն տեղում, էջ 82:

⁸⁴ Նույն տեղում, էջ 84:

⁸⁵ Նույն տեղում, էջ 78:

⁸⁶ Տե՛ս **Խաչատրյան Վ.**, *Բարբառային-խոսակցական բառեր Դ. Փարպեցու երկերում.* - «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» հոդվածների ժողովածու, Ե., 2019, էջ 67 – 77, *Բարբառային բառեր Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկում.* - «Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2023, էջ 87-104....

Կարևոր ենք համարում նաև մեջբերել լեզվաբան Վ. Կատվալյանի՝ բարբառների, ժողովրդախոսակցական և գրական լեզուների փոխառնչությունների վերաբերյալ մի ուշագրավ դիտարկում, որն անմիջականորեն կապվում է խնդրո առարկային. «Բանավոր խոսքը նախ և առաջ դրսևորվում է բարբառների ձևով, որոնք ներկայացնում են լեզվի բնական, անմշակ վիճակը: Բարբառների հիմքի վրա էլ ձևավորվում են լեզվի ժողովրդախոսակցական և գրական տարբերակները.... առանց բարբառային, բնական հիմքի՝ նշված տարբերակները գոյություն ունենալ չեն կարող»⁸⁷:

Վ. Կատվալյանը, «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում հայ բարբառների ծագման խնդրի շուրջ ծավալված բանավեճի արդյունքները իր հոդվածում քննելով, եզրակացնում է, որ վերջնականապես իրենց լուծումն են ստանում մի շարք հարցեր, այդ թվում և հետևյալները. V դարում և դրանից առաջ էլ հայերենը բարբառներ ուներ, սակայն արդի բարբառները դրանց ուղղագիծ շարունակությունը չեն, - արդի հայ բարբառներն իրենց ներկա վիճակով ավելի հին չեն, քան գրաբարը, բայց և գրաբարի քայքայման արդյունք չեն ու գրաբարի աղավաղումներ չեն⁸⁸: Մինևույն ժամանակ ինչ-որ առումով անորոշ ու հակասական է համարում հայ բարբառների ծագման ժամանակի և ընթացքի վերաբերյալ արտահայտված տեսակետները՝ պնդելով տարիներ առաջ մեկ այլ աշխատության մեջ իր արտահայտած վերոհիշյալ ընդհանրական միտքը, սակայն այս դեպքում հայերենի օրինակով՝ «հայերենի բարբառների առաջացումը սկսվում է հայերենի ծագումով, այն է՝ հայերենի

⁸⁷ Կատվալյան Վ., *Հայ բարբառագիտության հարցեր*, «Հայաստան» հրատ., Ե., 2014, էջ 4:

⁸⁸ Կատվալյան Վ., *Հայ բարբառների ծագման հարցը «Պատմա-բանասիրական հանդեսի» էջերում*, էջ 31-32:

նախնական բարբառային վիճակով»⁸⁹: Բարբառագետը նաև համոզիչ չի համարում դրույթներն այն մասին, թե V դարում բարբառային տարբերությունները թույլ էին, և որ ուժեղացել են X–XI դարերում, իսկ ժամանակակից բարբառների հիմնական հատկանիշները ձևավորվել են դրանից հետո, կամ՝ մինչև XI–XII դդ. հայ բարբառների տարբերությունները գերազանցապես հնչյունական-բառապաշարային էին, և XII դարից հետո միայն սկսում են գերակշռող դիրք գրավել ձևաբանական տարբերությունները: Նաև կասկածելի համարելով հնչյունական իրողությունների վերաբերյալ որոշ տեսակետներ՝ խոսքն ավարտում է այսպիսի դիպուկ բնութագրմամբ. «....բանավեճն արդյունավետ է եղել ոչ միայն լուծումներ առաջարկելու, այլ նաև իրենց լուծմանն սպասող խնդիրներ առաջադրելու առումներով»⁹⁰:

Եզրակացություններ: Դատելով վերը շարադրվածից՝ պետք է փաստենք, որ հայերենագիտության երախտավորները բավական պատկառելի աշխատանք են կատարել նաև հայ բարբառագիտության և մասնավորապես պատմական բարբառագիտության ոլորտում: Արդի նվաճումների համաձայն՝ հայերենի բարբառներ եղել են բոլոր ժամանակներում, բնականաբար V դարում նույնպես: Ինչպես և վերը նկատեցինք, այդ մասին որոշ վկայություններ կան պատմական աղբյուրներում: Պիտի հավելենք նաև քերականական մեկնիչների տեղեկությունները և առանձին լեզվական միավորների վերաբերյալ դիտարկումները: Այդ ամենից զատ՝ խնդրո առարկայի վառ ապացույցն են հատկապես գրավոր աղբյուրներում նկատվող շատ թե քիչ այն լեզվական միավորները, որոնք շեղվում են գրաբարյան օրինաչափությունից՝ մասամբ հարելով մերօրյա բարբա-

⁸⁹ Նույն տեղում:

⁹⁰ Նույն տեղում, էջ 33:

ռային իրողություններին: Այսպիսով, համաձայն լեզվաբան Գ. Ջահուկյանի հույժ կարևոր դիտարկման, հայագիտության զարգացման արդի փուլում այլևս վիճելի չհամարելով V դարում հայերենի բարբառների գոյության հարցը՝ պետք է հետաճանաչել ինքնըզուրպ ծագման, բնույթի, քանակի և ժամանակակից բարբառների հետ ունեցած փոխհարաբերության խնդրահարույց հարցերի լուծմանը:

Хачатрян Валентин- Вопрос об армянских диалектах пятого века в арменоведении.- В статье рассматриваются различные мнения известных лингвистов относительно существования армянских диалектов в V веке, а следовательно, и происхождения армянских диалектов, также о взаимосвязи древнеармянского языка и диалектов. Замечено, что диалекты армянского языка существовали во все времена, в том числе и в пятом веке, о чем наглядно свидетельствуют сведения армянских летописцев и отдельные языковые реалии, встречающиеся в письменных источниках.

Ключевые слова: грабар (древнеармянский язык), диалект, литературный язык, разговорный язык, арменоведение, диалектология, лингвистика.

Khachatryan Valentin - The Question of Armenian Dialects of the Fifth Century in Armenian Studies. - This article explores the perspectives of renowned linguists on the existence of Armenian dialects in the fifth century, shedding light on the origins and interactions of old Armenian dialects. It asserts that dialectal variation in the Armenian language has been a constant feature throughout its history, including the fifth century. This claim is supported by evidence from Armenian historians and specific linguistic phenomena documented in written sources.

Key words: grabar (old Armenian), dialect, literary language, spoken language, Armenian studies, dialectology, linguistics.